Հավելված N 63
Հաստատված է
Էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի
2019 թ. հուլիսի 26-ի N 636-Ա հրամանով

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԻԱՅԻ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ

1.Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) սննդամթերքի անվտանգության վարչության (այսուհետ՝ Վարչություն) բուսասանիտարիայի բաժնի (այսուհետ՝ Բաժին) գլխավոր մասնագետ (ծածկագիրը՝ 23-32.2-Մ2-3)

1.2. Ենթակա և հաշվետու է

Բաժնի գլխավոր մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. **Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները**

Բաժնի գլխավոր մասնագետին փոխարինում է Բաժնի ավագ մասնագետը:

1.4. Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միհեր Մկրտչյան 5

2.Պաշտոնի բնութագիր

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. Իրականացնում է բուսասանիտարիայի ոլորտում պետական քաղաքականության, բույսերի պաշտպանության նպատակային ծրագրերի մշակման աշխատանքները,
2. Իրականացնում է բույսերի կարանտին և ոչ կարանտին վնասակար օրգանիզմների մոնիթորինգի իրականացման և բուսասանիտարական իրավիճակի գնահատման արդյունքում անհրաժեշտության դեպքում իրազեկում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, ֆիզիկական և իրավաբանական անձանց վնասակար օրգանիզմների դեմ պայքարի համալիր միջոցառումների կիրառման մասին,
3. Իրականացնում է բուսասանիտարիայի ոլորտի ռիսկերի կառավարում և ռիսկերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակում՝ գիտականորեն հիմնավորված ռիսկերի վերլուծության և գնահատականների հիման վրա,
4. Կազմակերպում է կառավարման մարմիններին բնագավառին առնչվող փաստաթղթերի վերաբերյալ եզրակացությունների տրամադրումը,
5. Իրականացնում է մասնակցություն ոլորտը կանոնակարգող իրավական ակտերի վերաբերյալ տնտեսավարող սուբյեկտներին ըստ անհրաժեշտության պարզաբանումներ և խորհրդատվության տրամադրումը,
6. Իրականացնում է բուսասանիտարիայի ոլորտին առնչվող հարցերի վերաբերյալ միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի), մշակման ու քննարկման գործընթացները՝ սահմանված կարգով մասնակցություն,
7. Իրականացնում է մասնակցությունը օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ կազմակերպվող բուսասանիտարիայի ոլորտին վերաբերող հանդիպումներին, խորհդակցություններին, սեմինարներին, խորհրդաժողովներին և այլ միջոցառումներին,

Իրականացնում է քաղաքացիների նամակների և դիմում-բողոքների քննարկումների և

բարձացված հարցերի լուծման ապահովումը:

Իրավունքները՝

- Ներկայացնել առաջարկություններ բուսասանիտարիայի ծրագրերի հետ կապված,
- Համագործակցել բուսասանիտարիայի ոլորտում ԵԱՏՄ և միջազգային կազմակերպությունների հետ,
- Ուսումնասիրել և վերլուծել բուսասանիտարիայի ապահովման հետ կապված խնդիրները,
- Սահմանված կարգով վերլուծել և գնահատել տրված հանձնարարություններից բխող մասնագիտական նշանակության խնդիրները, դրանց տալ մասնագիտական լուծումներ և առաջարկներ,
- Մասնակցել բուսասանիտարիայի ոլորտի շրջանակներում վերապատրաստումներին, միջազգային կառույցների կողմից կազմակերպած հանդիպումներին, սեմինարներին և այլ հավաքներին,
- Մասնակցել նախարարության այլ ստորաբաժանումների, Հայաստանի Հանրապետության պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ պետական մարմինների, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց, հասարակական կազմակերպությունների, ոլորտում գործող միջազգային ու տեղական կառույցների հետ համագործակցությամբ իրականացվող աշխատանքների,
- Ստանալ այլ գերատեսչություններից ծառայողական պարտականությունների կատարման համար սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր,
- Ստանալ վարչության պետի հանձնարարականների կատարման համար պահանջվող տեղեկություններ և նյութեր այլ ստորաբաժանումներից, կազմակերպել քննարկումներ, հրավիրել շահագրգիռ կողմերին:

Պարտականությունները՝

- Բուսասանիտարիայի բնագավառում պետական քաղաքականության մշակման և իրականացման վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ,
- Մշակել բուսասանիտարիայի բնագավառին առնչվող օրենսդրական ակտերի նախագծերը, ինչպես նաև օրենսդրությամբ նախատեսված դեպքերում բնագավառը կարգավորող իրավական ակտերի նախագծերը,
- Մշակել բուսասանիտարիայի ոլորտի զարգացման ռազմավարական ծրագրերի, հայեցակարգերի, օրենքների և իրավական այլ ակտերի նախագծերը բուսասանիտարիայի ոլորտում վերլուծությունների, համապատասխան կանխատեսումների հիման վրա,
- Մասնակցել բուսասանիտարիայի ոլորտի խնդիրների քննարկմանը, վերլուծությանը,
- ՈՒսումնասիրել բուսասանիտարիայի ոլորտի օրենսդրությունը, վերհանել միջազգային փորձը, օրենսդրության մեջ առկա հակասությունների դեպքում օրենսդրական բացերը և դրանց վերացմանն ուղղված իրավական ակտերը,
- Կառավարությունից ստացած հանձնարարականների կատարման համար պարտավոր է համապատասխան ստորաբաժանումների հետ կազմակերպել քննարկումներ և նախապատրաստել դրանցից բխող իրավական ակտերի նախագծեր և պատասխան գրություններ,
- Մշակել բաժնի աշխատանքային ծրագիրը:

3.Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

1	**Ուղղություն**	Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնային տնտեսություն և անասնաբուժություն
2	**Ոլորտ**	Գյուղատնտեսական գիտություններ

3	**Ենթաոլորտ**	Ագրոնոմիա և անասնաբուծություն
4	**Մասնագիտություն**	Ագրոնոմիա

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ կենսաբանական գիտությունների կամ առողջապահության բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Ծրագրերի մշակում
2. Խնդրի լուծում
3. Հաշվետվությունների մշակում
4. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Կոնֆլիկտների կառավարում
3. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
4. Փաստաթղթերի նախապատրատում

4.Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների ապահովման մասնագիտական գործունեության որոշակի ոլորտին վերաբերող համապետական ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: